ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/115

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

Բողոք բերող՝ «Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչներ՝ Մ. Մնացականյանի, Դ. Արզումանյանի,

«Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Վ. Հովհաննիսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝

Ընկերություն) կողմից 16.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.12.2021թ.-ին:

17.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/115 համարի ծածկագիրը:

23.12.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա՝ Բողոքներ քննող անձի 24.12.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/21348-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

23.12.2021թ.-ին, 30.12.2021թ.-ին և 11.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.01.2022թ.-ին:

2. «Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ն 16.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել են հետևյալ ոչ իրավաչափ կետերը /ներկայացվում է համառոտ/՝

Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում՝ հագեցված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով: Բոլոր տեխսպասարկման կետերում վերանորոգման աշխատանքները պետք է նախատեսված լինեն առնվազը 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2,8 մետր լայնություն և 12000կգ քաշ ունեցող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների համար:

Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 20 մասնագետ, որոնցից 10-ը Երևանում տեղակայված տեխսպասարկման կենտրոնում, 5-ական Կապան և Գյումրի քաղաքաներում տեղակայված տեխսպասարկման կենտրոններում՝ ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում:

Կատարողը բոլոր տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց:

Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման մեկ ստենդ, հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման մեկ ստենդ, տվյալ չափաբաժնում նշված ավտոմեքենաների ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում (ТНВД стенд)

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Եվ այսպես.

Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարվելն «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգ:

Սույն Ընթացակարգին հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել են հետևյալ ոչ իրավաչափ կետերը /ներկայացվում է համառոտ/՝

Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում՝ հագեցված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով: Բոլոր տեխսպասարկման կետերում վերանորոգման աշխատանքները պետք է նախատեսված լինեն առնվազը 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2,8 մետր լայնություն և 12000կգ քաշ ունեցող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների համար:

Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 20 մասնագետ, որոնցից 10-ը Երևանում տեղակայված տեխսպասարկման կենտրոնում, 5-ական Կապան և Գյումրի քաղաքաներում տեղակայված տեխսպասարկման կենտրոններում՝ ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում:

Կատարողը բոլոր տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց:

Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման մեկ ստենդ, հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման մեկ ստենդ, տվյալ չափաբաժնում նշված ավտոմեքենաների ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում (ТНВД стенд):

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նախ այն հանգամանքի վրա, որ նախկին տարիներին հայտարարված նույն ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված մրցույթներում չի եղել նման պահանջներ և ընդհանրապես անհասկանալի է, թե սույն բողոքով վիճարկվող Ընթացակարգի շրջանակներում՝ պատվիրատուն ինչպես է հիմնավորում, որ իր կարիքների համար անհրաժեշտ է օրինակ հետևյալ պահանջները՝

1. տեխսպասարկման կետերի չափերը պետը է լինեն առնվազը 4 մետր բարձրություն. 12 մետր երկարություն, 2.8 մետր լայնություն.

2. առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում /Օրինակ ինչու ոչ Վանաձորում այլ Կապան և Գյումրիում քաղաքներում այն էլ 3-ական քանակով/

3. տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց /եթե վերանորոգման աշխատանքները կատարվելու են տեխսպասարկման կետերում/ և այլև:

Հատկանշական է նաև այն փաստը, որ Հրավերի 7.2 կետով սահմանվել է, որ

7.2 Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե ՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում.

Այս մասով նույնպես ուշադրության է արժանանում այն հանգամանքը, որ Ընթացակարգի Հրավերով սահմանվել են այնպիսի պահանջներ, որոնք դադարել են գործել, մասնավորապես՝ 10 մլն. ՀՀ դրամի փոխարեն պետք է լիներ 25 մլն. ՀՀ դրամ:

Մասնավորապես Ընթացակարգի Հրավերի տեխնիկական-ռնութագրում անհրաժեշտ է կատարել փոփոխություն, այն է՝ հանել վերը նշված չափաբաժնի համար սահմանված վիճարկելի և չհիմնավորված պահանջները, քանի որ աշխատանքների կատարման համար այդպիսի պահանջների առկայությունը ոչ իրավաչափ է և

չհիմնավորված և փոփոխել Հրավերի 7.2 կետը, որը չի համապատասխանում գործող իրավական կարգավորումներին:

Հետևաբար գտնում ենք, որ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հրավերը կազմելիս թույլ է տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության մի շարք իրավապարտադիր նորմերի խախտումներ, որոնք իրենց հերթին հանգեցրել էր մասնակիցների շրջանակի ընդլայնման խոչընդոտի:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքաբերը 29.12.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում Արայիկ Մեսրոպյան Մնացականի ԱՁ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/115 բողոքը:

Վերոհիշյալ բողոքով վիճարկվել է Արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև Ընթացակարգ):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Սույն բողոքի լրացմամբ ներկայացվում են լրացուցիչ հիմնավորումներ և ապացույցներ առ այն, որ Ընթացակարգի հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ, մասնավորապես.

1) Ընթացակարգի հրավերի 7.2-րդ կետով սահմանվել է հետևյալ պահանջը.

Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե՝

ա. մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում.

Բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել են այնպիսի պահանջներ, որոնք նախատեսված են եղել նախկին կարգավորմամբ, կատարված օրենսդրական փոփոխության համաձայն դադարել են գործել, մասնավորապես՝ 10 մլն. ՀՀ դրամի փոխարեն պետք է լիներ 25 մլն. ՀՀ դրամ: Մասնավորապես, ՀՀ կառավարության 526-Ն որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:

Այսպիսով, Ընթացակարգի հրավերի այս մասով չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, և այս տեսանկյունից ինչպես պետք է գնահատվեր ներկայացված հայտը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն ըստ հրավերի պահանջների, թե գործող օրենսդրության պահանջների տեսանկյունից:

2) Ընթացակարգին հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է առնվազն 11 տեխսպասարկման կետ հետևյալ չափերի պետք է լինեն առնվազը 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2.8 մետր լայնություն:

Այս տեսնկյունից բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ կարևոր հանգամանքը, ինչու են սահմանվել նախ, հենց 11 տեխսպասարկման կետ, եթե նախկինում հայտարարված ընթացակարգերում տեխսպասարկման կետերի քանակը չեն գերազանցել 3-4 (համապատասխան հրավերները կցվում են), իսկ վերանորոգումների հիմնական մասը կատարվել են տեղում վթարված, անսարք մեքենայի գտնվելու վայրում:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ Պատվիրատուն պետք է համապատասխան վերլուծությամբ, թվաբանական ցուցանիշներով ապացուցի, որ հենց իր անմիջական պահանջից, կարիքից է բխում 11 տեխսպասարկման կետերի առկայությունը, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը պահանջում է, որ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ, ինչպես նաև գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Գտնում ենք, որ հիմնավոր չէ նաև հենց 11 տեխսպասարկման կետերի նման չափերի պահանջը այն պարզ պատճառով, որ վերոհիշյալ չափերի տեխսպասարկման կետերը նախատեսված են ամենամեծ մեքենաների համար, իսկ Պատվիրատուի տիրապետության տակ գտնվում են մի քանի այնպիսի չափերի մեքենա, որնց համար անհրաժեշտ են նման չափերի տեխսպասարկման կետեր: Այս առումոբ բողոքներ քննող անձին խնդրում ենք Պատվիրատուից պահանջել տեղեկատվություն նման չափերի մեքենաների առկա քանակի և նախորդ տարիներին այդ մեքենանաների վերանորոգման դեպքերի վերաբերյալ:

Գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերով պահանջված տեխսպասարկման կետերի քանակը և չափերը չեն բխում պատվիրատուի ուղղակի կարիքից և անհիմն բարդացնում են տվյալ ընթացակարգի մասնակցությունը առաջացնելով մասնակցության չհիմնավորված խոչընդոտներ:

3) Ընթացակարգին հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր

Կապան և Գյումրի քաղաքներում հագեցված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նախկին տարիներին անցկացրած ընթացակարգերով երբևիցե չի սահմանվել տեսպասարկամ գտնվելու հստակ վայրեր: Մասնավորապես, անհասկանալի է, թե ինչու դրանցից 5-ը պետք է գտնվեն Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում: Նախ, գտնում ենք, որ պատվիրատուն պետք է նախկին տարիներին համապատասխան վայրերում կատարված վերանորոգումների պատվերներով ապացուցի, որ նման պահանջը վայրերի մասով, ուղղակիորեն բխում է իր կարիքից: Միևնույն ժամանակ անհասկանալի է կոնկրետ քաղաքների Կապան և Գյումրի նշումը և պահանջը, որ հենց 3-ական տեխսպասարկման կետեր գտնվեն հենց այդ քաղաքաներում, իսկ օրինակ, ինչու բաշխումը 3-ական տեխսպասարկման կետերի չկատարել համապատասխան մարզերով:

Գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերով պահանջված տեխսպասարկման կետերի գտնվելու հստակ վայրը քաղաքը, չեն բխում պատվիրատուի ուղղակի կարիքից և անհիմն բարդացնում են տվյալ ընթացակարգի մասնակցությունը առաջացնելով մասնակցության չհիմնավորված խոչընդոտներ և սահմանափակում են մրցակցությունը:

4) Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է Կատարողը բոլոր տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում համապատասխան սարքերով ու գործիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպորտային միջոց:

Այս տեսանկյունից բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ շարժական ավտոտեխսպասարկում համապատասխան սարքերով ու գործիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպորտային միջոցը, ըստ էության, հանդիսանում է նույն տեխսպասարկման կենտրոնները, միայն մոբիլ, շարժական տարբերակով: Այս առումով դառնում է առնվազն անհասկանալի 22 տեխսպասարկման կետ միաժամանակ ունենալու պահանջը, արդյոք երբևիցե Պատվիրատուն նույն ժամանակահատվածում ունեցել է նման քանակի վթարված, չաշխատող մեքենա, որպեսզի պահանջ լինի ունենալու թե 11 տեխսպասարկման կենտրոն, թե նույն քանակի մոբիլ տեխսպասարկման կենտրոն:

Գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերով պահանջված աեխսպասարկման կետերի գտնվելու հստակ վայրը քաղաքը, չեն բխում պատվիրատուի ուղղակի կարիքից և անհիմն բարդացնում են տվյալ ընթացակարգի մասնակցությունը առաջացնելով մասնակցության չհիմնավորված խոչընդոտներ:

5) Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 20 մասնագետ, որոնցից 10-ը Երևանում տեղակայված տեխսպասարկման կենտրոնում, 5-ական Կապան և Գյումրի քաղաքներում տեղակայված տեխսպասարկման կենտրոններում ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նախկին տարիներին հայտարարված ընթացակարգերի հրավերներով Պատվիրատուն պահանջել է ոչ ավելի, քանի 10 մասնագետ, սակայն ներկայիս հրավերով այդ թիվը կրկնապատկվել է: Գտնում ենք, որ Պատվիրատուն պարտավոր է հիմնավորել թվի կրկնապատկումը կատարված համապատասխան վերլուծությամբ և թվաբանական հաշվարկով:

6) Ընթացակարգին Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է „Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման մեկ ստենդ, հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման մեկ ստենդ, տվյալ չափաբաժնում նշված ավտոմեքենաների ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում (ТНВД стенд):

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք, հրավերին կից ներկայացված պահանջված աշխատանքների ցանկում բացակայում է բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման կամ հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման որևէ աշխատանք, որը համապատասխանաբար կառաջացեր պահանջ ունենալու բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման ստենդ և հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման ստենդ: Նման պարագայում անհիմն է և չի բխում հրավերի պահանջներից բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման ստենդ և հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման ստենդ ունենալու պահանջը: Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ նախկին տարիների հրավերներում էլ նախատեսված չի եղել վերոհիշյալ աշխատանքների կատարման պահանջը, ինչպես նաև վերոհիշյալ սարքավորումները ունենալու պահանջը:

Բողոքներ քննող անձին առաջարկում ենք նաև հարցում կատարել Պատվիրատուին, որպեսզի վերջինս ներկայացնի տեղեկատվություն, թե տարվա կտրվածքով քանի անգամ է իրականացվել դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերումը, որ Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ մասնակիցը պետք է

ունենա ավտոմեքենաների ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում:

Ընդհանուր առմամբ գտնում ենք, որ անգամ եթե վերոհիշյալ աշխատանքները նախատեսված լինեին ընթացակարգի հրավերով, ապա մասնակցից պահանջելը, որպեսզի վերջիններս ունենան վերոհիշյալ սարքավորումները, ավելորդ սահմանափակում է մրցակցությունը, քանի որ նման աշխատանքի պահանջ առկա լինելու դեպքում մասնակիցը ընդամենը այդ պահին կարող է վարձակալալել վերոհիշյալ հազվադեպ օգտագործվող սարքավորումը:

7) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ ի տարբերություն նախորդ տարվա հրավերների, այս Ընթացակարգի հրավերում նախատեսված չեն նաև կատարվելիք աշխատանքների գները, ինչը էականորեն դժվարեցնում է հնարավոր մասնակցի կողմից գնային առաջարկի հաշվարկումը:

Ելնելով վերոգրայլից գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված սկզբունքներին, չի ապահովվի պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, որի արդյունքում գնումը չի լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Ի հավաստումն վերոհիշյալ փաստարկի նշենք, որ Ընթացակարգի նման հրավերի պայմաններում հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Ելնելով վերոգրայլից բողոքնր քննող անձին խնդրում ենք բավարարել Արայիկ Մեսրոպյան Մնացականի ԱՁ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/115 բողոքը:»:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/20899-2021 գրությամբ դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի կողմից 16.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և

ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերի, ներկայացնելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը և գրավոր դիրքորոշում:

Պատվիրատուն 21.12.2021թ.-ի թիվ 02/03.5/7131-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բողոքի առարկա հանդիսացող ծառայության տեխնիկական բնութագրով սահմանված պայմանների վերաբերյալ հայտնում եմ, ինչպես նախորդող տարիներին, այնպես էլ 2022թ-ի Փրկարար ծառայության կարիքների համար հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման ընթացակարգի հրավերի պայմաններում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք նպատակ ունեն հնարավորինս բացառելու տարիների ընթացքում տվյալ ծառայությունը մատուցող ընկերությունների մոտ վերանորոգման գործընթացում առաջացող խնդիրները և նպաստելու հրշեջ-փրկարարական տեխնիկայի վերանորոգման գործընթացի որակի և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ժամանակատարության կրճատմանը: Ձեր կողմից անհասկանալի համարվող փոփոխություններն իրականացվել են ավտոմեքենաների վերանորոգման գործընթացում առաջացող հետևյալ հիմնական խնդիրները բացառելու նպատակով՝

1. Տեխսպասարկման կետի չափերը՝ բարձրություն, երկարություն, լայնություն – 4 X 12 X 2,8 մետր.

Սույն պահանջը նախատեսված է եղել վերջին մի քանի տարիներին իրականացված գնման գործընթացների հրավերների տեխնիկական պայմաններում, արտացոլում է փրկարար ծառայության ամենամեծ տրանսպորտային միջոցների գաբարիտային չափերը և ունի մեկ նպատակ՝ հրշեջ-փրկարարական ջոկատներում առկա բոլոր ավտոմեքենաները տեղավորվեն տեխսպասարկման կետերում:

2. Առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում՝ հագեցված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով:

Այս պահանջը ևս ունի շատ պարզ և տրամաբանական պատճառ: Ունենալով 3-ական տեխսպասարկման կետեր Հանրապետության առավել հեռավոր տարածաշրջաններում Փրկարարական ծառայությունը կամ վերանորոգում իրականացնող ընկերությունը ստիպված չեն լինի այդ տարածաշրջանի հրշեջ-փրկարարական ջոկատների

տեխնիկան տեղափոխել Երևանում գտնվող միակ վերանորոգման կենտրոն՝ ծախսելով ավելորդ ռեսուրսներ և ժամանակ, որոնց արդյունավետ օգտագործումն ամենակարևորն է հրշեջ ավտոմեքենաների մարտական հաշվարկ վերադառնալու գործընթացում, իսկ 3-ական տեխսպասարկման կետի առկայությունը թույլ կտա միաժամանակ իրականացնել մի քանի ավտոմեքենայի արագ վերանորոգում:

3. Կատարողը տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց.

Այս պահանջը ևս նախատեսված է եղել վերջին մի քանի տարիներին իրականացված գնման գործընթացների հրավերների տեխնիկական պայմաններում և նպատակ ունի անմիջապես տարածքային ստորաբաժանումներում արագ վերացնել հրշեջ-փրկարարական տեխնիկայի այն անսարքությունները, որոք վերացնելու համար պարտադիր չէ տեխնիկան տեղափոխել վերանորոգման կենտրոն:

Ելնելով վերոգրյալից պարզ է դառնում, որ Արայիկ Մեսրոպյան Մնացականի ԱՁ-ի կողմից «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմանների մասին տրված այն գնահատականը, որ պայմանները ոչ իրավաչափ են, չեն համապատասխանում ՀՀ սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, մտացածին են և չհիմնավորված:

Այսպիսով, Փրկարար ծառայության հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման ընթացակարգի հրավերի պահանջներում անհրաժեշտ է ներառել ոչ միայն այնպիսի պայմաններ, որոնք կխրախուսեն գործարար միջավայրի բարելավումը կամ ձեռնարկատիրության խթանումը, այլև հատկապես պետք է ներառվեն գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանող բոլոր այն պայմանները, որոնք ուղղված են բացառապես հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների տեխնիկայի անխափան շահագործմանը, իսկ խափանման դեպքերում արագ վերանորոգմանը, ինչն այն հիմնական բաղադրիչն է, որով փրկարար ծառայությունը կարողանում է լուծել իր առջև դրված խնդիրները՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, աղետների ռիսկի նվազեցման, փրկարարական, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգ¬նողական աշխատանքներ իրականացնելիս:»:

Պատվիրատուն 30.12.2021թ.-ի թիվ 02/03.5/7367-2021 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում Արայիկ Մեսրոպյան ԱՁ-ի ԳԲՔԱ-ԼՕ-2021/115 բողոքի լրացման վերաբերյալ պարզաբանումները և պատվիրատուի դիրքորոշումը:

Բողոքի լրացմամբ ներկայացված ենթադրյալ խախտումների՝

1-ին կետի վերաբերյալ.

Ի պատասխան առաջին կետով ներկայացված պնդմանը, որ հրավերի 7-րդ բաժինը ներկայացված է «Գնումների մասին» ՀՀ գործող օրենսդրության խախտմամբ՝ հայտնում եմ, որ գնման գործընթացը կազմակերպվել է հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, և հայտի ապահովում մասնակցից առհասարակ չի պահանջվել անկախ գնային առաջարկի չափից և հրավերի 7-րդ բաժնի վերնագրում հստակ նշվել է, որ հայտի ապահովում չի գործում, ուստի պնդումը, որ հրավերը չի համապատասխանում գործող օրենսդրությանը, անհիմն է և առարկայազուրկ:

2-ին կետի վերաբերյալ.

Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է առնվազն 11 տեխսպասարկման կետ՝ առնվազն 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2,8 մետր լայնություն չափսերով, քանի որ նախորդող տարիներին երեք տեխսպասարկման կետ ունեցող ավտովերանորոգող կազմակերպությունների զգալի մասը հնարավորություն չի ունեցել մի քանի անսարք տրանսպորտային միջոցի վերանորոգումն իրականացնել միաժամանակ՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Նշված խնդրի լուծումը ավելի է բարդանում, երբ երեք տեխսպասարկման կետ ունեցող ավտովերանորոգող կազմակերպությունները տարվա ընթացքում նմանատիպ ծառայությունների մատուցման պայմանագրեր են կնքում այլ գերատեսչությունների կամ տնտեսվարողների հետ և ստիպված են լինում հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգումն իրականացնել կամ այլ ավտոմեքենաների վերանորոգումից հետո, կամ այդ ավտոմեքենաների վերանորոգմանը զուգահեռ, ինչն էապես ազդում էր վերանորոգման գործընթացի ժամանակատարության վրա: Վերանորոգման գործընթացն էլ ավելի էր երկարաձգվում, երբ տեխսպասարկման կետի բացակայության խնդրին գումարվում էր համապատասխան մասնագետների թվի սահմանափակությունը՝ նախկինում առնվազն 10 մասնագետ, ՀՀ ողջ տարածքում ավտովերանորգման ծառայություն մատուցելու համար: Հրավերի սույն կետով ներկայացված պայմանը ուղղակիորեն բխում է Պատվիրատուի անմիջական պահանջից,

քանի որ Պատվիրատուն ունի մարտական հաշվարկում գտնվող մոտ 300 տրանսպորտային միջոց, որոնցից 73-ի վերանորոգումը չի կարող իրականացվել պահանջված չափերից ավելի փոքր չափսեր ունեցող տեխսպասարկման կետում և որոնց միաժամանակյա վերանորոգման հնարավորությունը պայմանագրի կողմ հանդիսացող ավտովերանորոգող կազմակերպությունը պետք է անպայման ունենա, հաշվի առնելով տվյալ ավտոմեքենաների ֆունկցիոնալ նշանակությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուն չի կարող կանխատեսել հնարավոր արտակարգ դեպքերի կամ պատահարների քանակը, մասշտաբը, դեպքերին ներգրավված տրանսպորտային միջոցների թիվը, դրանց տեսակները և հնարավոր խափանումների թիվն ու պատճառները: Պատվիրատուի կողմից շահագործվող տեխնիկայից համեմատաբար մեծ գաբարիտային չափսեր (երկարություն/լայնություն/բարձրություն) ունեցողների ցանկը ներկայացվում է ստորև.

- Ավտոբուս Bova, Neoplan, Scania – 11.5-16 X 3-3.1 X 3-4.5 - 3 միավոր

- Ավտոբուս Foton, ПАЗ -8.5-8.8 X 2.5-2.7 X 3.2-3.5 – 4 միավոր

- Հրշեջ ավտոբաք ISUZU 10տ. - 9.9 X 2.5 X 3.5 – 3 միավոր

- Հրշեջ ավտոբաք ISUZU 3.5տ. - 8.1 X 2.4 X 3 – 44 միավոր

- Հրշեջ ավտոբաք KAMAZ 8տ. - 8.5 X 2.5 X 3.6 – 8 միավոր

- Հրշեջ ավտոսանդուղք ISUZU 35մ. - 9.6 X 2.5 X 3.9 – 5 միավոր

3-րդ կետի վերաբերյալ.

Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է, որ Կատարողի առնվազն 11 տեխսպասարկման կետերից 5-ը պետք է գտնվեն Երևանում, իսկ 3-ական տեխսպասարկման կետեր՝ Կապան և Գյումրի քաղաքներում:

Ինչպես ներկայացվել էր բողոքին ի պատասխան տրված գրությամբ՝ այս պահանջը ունի շատ պարզ և տրամաբանական պատճառ: Ունենալով 3-ական տեխսպասարկման կետեր Հանրապետության առավել հեռավոր տարածաշրջանների առավել խոշոր քաղաքներում (Հանրապետության հյուսիսում՝ Գյումրի, հարավում՝ Կապան), որտեղ բնականաբար ավելի մեծ է թե բնակչության թիվը, թե քաղաքում և հարակից շրջաններում տեղակայված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների թիվը, Փրկարարական ծառայությունը կամ վերանորոգում իրականացնող ընկերությունը ստիպված չեն լինի այդ տարածաշրջանի հրշեջ-փրկարարական ջոկատների տեխնիկան տեղափոխել Երևանում գտնվող միակ վերանորոգման կենտրոն՝ ծախսելով ավելորդ ռեսուրսներ և ժամանակ,

որոնց արդյունավետ օգտագործումն ամենակարևորն է հրշեջ ավտոմեքենաների մարտական հաշվարկ վերադառնալու գործընթացում, իսկ երեքական տեխսպասարկման կետերի առկայության պահանջը միայն Հանրապետության հյուսիսի և հարավի ամենամեծ քաղաքներում, նախատեսվել է ընթացակարգին տարբեր կազմակերպությունների մասնակցությունը չսահմանափակելու նպատակով, քանի որ նույն պահանջը ՀՀ բոլոր մարզերում պարտադրելու դեպքում հնարավոր մասնակիցների թիվը կհասնի նվազագույնի կամ ընդհանրապես ընթացակարգին մասնակցող կազմակերպություն չի գտնվի:

4-րդ կետի վերաբերյալ.

Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է, որ Կատարողը բոլոր տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց:

22 տեխսպասարկման կետ՝ ներառյալ շարժական ավտոտեխսպասարկման կետերը, միաժամանակ ունենալու պայմանը ևս ուղղակիորեն բխում է Պատվիրատուի անմիջական պահանջից, քանի որ նախորդ տարվա ընթացքում եղել են օրեր երբ Փրկարար ծառայության մարտական հաշվարկում ներառված տրանսպորտային միջոցներից 20-ը և ավելին գտնվել են անսարք վիճակում (օրվա տեղեկագրերի մի մասը կցվում է): Կարևոր է նաև նշել, որ Փրկարար ծառայության մարտական հաշվարկում ներառված տրանսպորտային միջոցներից բացի ծառայությունը շահագործում է նաև 55 միավոր օպերատիվ-հերթապահ ավտոմեքենաներ, որոնք չեն ներառվումն չեն ամենօրյա մարտական հաշվարկում, և որոնց վերանորոգման աշխատանքները ևս իրականացվում են ավտովերանորոգող կազմակերպություններում:

5-րդ կետի վերաբերյալ.

Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է, որ Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 20 մասնագետ, որոնցից 10-ը Երևանում տեղակայված տեխսպասարկման կենտրոնում, 5-ական Կապան և Գյումրի քաղաքներում տեղակայված տեխսպասարկման կենտրոններում՝ ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում:

Ինչպես նշվեց պարզաբանումների 2-րդ կետում նախկին տարիներին հայտարարված ընթացակարգերի հրավերներով Պատվիրատուի կողմից պահանջված 10 մասնագետի առկայությունը պարբերաբար երկարաձգել է Հանրապետության ողջ տարածքում իրականացվող ավտովերանորոգման գործընթացի ժամանակատարությունը,

ինչի պատճառով որոշում է կայացվել 5-ական մասնագետի պահանջ ավելացնել Գյումրիում և Կապանում տեղակայված ավտովերանորոգման կենտրոններում: Պատվիրատուի կողմից տարվա ընթացքում Գյումրիում և Կապանում շահագործվող ավտոմեքենաների վերանորոգման հայտերը կցվում են:

6-րդ կետի վերաբերյալ.

Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով սահմանվել է, որ Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման մեկ ստենդ, հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման մեկ ստենդ, տվյալ չափաբաժնում նշված ավտոմեքենաների ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում (ТНВД стенд):

Բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման ստենդն անհրաժեշտ է բեռնատար ավտոմեքենաների խողովակների ելքային և մուտքային հատվածներում ներդրված փոխանցիչների կարգաբերման և փոխարինման համար, ինչ իրենից ներկայացնում է շատ պարզ, բայց միևնույն ժամանակ շատ կարևոր գործընթաց, որի իրականացման հնարավորությունը ավտովերանորոգող կազմակերպության չունենալու դեպքում կարող է լուրջ խնդիրներ առաջացնել վերանորոգման ողջ գործընթացում: Խողովակների փոխանցիչների կարգաբերման և փոխարինմանը վերաբերվող աշխատանքի անվանումը շատ այլ պարզագույն աշխատանքների անվանումների նման (անվադողի կամ անվահեծի ամրացման մանեկի քանդում կամ ձգում, ապակեմաքրիչների զսպանակի և ռետինե շերտի փոխարինում, լուսարձկների միջադիրների փոխարինում և այլն) ներառված չեն հրավերով սահմանված աշխատանքների ցանկում:

Անվաբացքի կարգավորման աշխատանքը նշված է տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 750-րդ տեղում, «Անվաբացքի կարգավորում» անվանումով, 16000-ից 20000 ՀՀ դրամ մեկ միավորի արժեքով: Անվաբացքի կարգավորման շնորհիվ ծառայությունը ստիպված չի լինի փոխարինել ժամկետից շուտ մաշված կամ դեֆորմացված անվադողեր: Նման պարագայում վերը նշված հրավերի պահանջները հիմնավոր են և բխում են Պատվիրատուի անմիջական պահանջից: քանի անգամ է իրականացվել դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերումը,

Ավտոմեքենաների ախտորոշման սարքավորումները, կախված ավտոմեքենայի տեսակից տարբեր են. հոսանքի սպառման ստուգիչ տեստերներից մինչև հատուկ ծրագրավորված համակարգիչներ, որոնց առկայության պահանջը պարտադիր է շատ կարճ

ժամանակահատվածում ավտոմեքենային հնարավոր անսարքությունը բացահայտելու համար:

Դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորումը ևս հանդիսանում է այն հիմնական սարքավորումներից մեկը, որը ավտովերանորոգող կազմակերպությունը պետք է ունենա իր տեխսպասարկման կենտրոններում: Տարվա ընթացքում Պատվիրատուի կողմից Կատարողին ներկայացված հայտերը՝ դիզելային վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորման միջոցով վերանորոգում կամ կարգաբերում իրականացնելու վերաբերյալ կցվում են:

Վերոնշյալ բոլոր պահանջները չեն կարող հակասել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված սկզբունքներին և չեն կարող առաջացնել ավելորդ սահմանափակումներ մրցակցության ժամանակ, քանի որ օրենքով սահմանված կարգով ընթացակարգի մասնակիցը կարող է վարձակալալել հրավերով պահանջված ողջ գույք-սարքավորումները, որոնք անհրաժեշտ են հրշեջ-փրկարարական տեխնիկայի վերանորոգման համար:

Ելնելով վերոգրայլից՝ գտնում ենք, որ Ընթացակարգի հրավերը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված սկզբունքներին:»:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 23.12.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 24.12.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/21348-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

5. **<u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/115 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարվել է «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է նաև, որ՝

- Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում՝ հագեցված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով: Բոլոր տեխսպասարկման կետերում վերանորոգման աշխատանքները պետք է նախատեսված լինեն առնվազը 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2,8 մետր լայնություն և 12000կգ քաշ ունեցող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների համար:
- Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 20 մասնագետ, որոնցից 10-ը Երևանում տեղակայված տեխսպասարկման կենտրոնում, 5-ական Կապան և Գյումրի քաղաքաներում տեղակայված տեխսպասարկման կենտրոններում՝ ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում:
- Կատարողը բոլոր տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց:
- Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման մեկ ստենդ, հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման մեկ ստենդ, տվյալ չափաբաժնում նշված ավտոմեքենաների

ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում (ТНВД стенд):

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի կողմից 16.12.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝

կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով 10.12.2021թ.-ին հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է նաև, որ՝

- Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 11 տեխսպասարկման կետ, որոնցից 5-ը Երևանում, 3-ական տեխսպասարկման կետեր Կապան և Գյումրի քաղաքներում՝ հագեցված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների վերանորոգման համար նախատեսված տեխնիկական միջոցներով: Բոլոր տեխսպասարկման կետերում վերանորոգման աշխատանքները պետք է նախատեսված լինեն առնվազը 4 մետր բարձրություն, 12 մետր երկարություն, 2,8 մետր լայնություն և 12000կգ քաշ ունեցող հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների համար:

- Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն 20 մասնագետ, որոնցից 10-ը Երևանում տեղակայված տեխսպասարկման կենտրոնում, 5-ական Կապան և Գյումրի քաղաքներում տեղակայված տեխսպասարկման կենտրոններում՝ ներգրավված մեքենաների սպասարկման ու նորոգման աշխատանքներում:
- Կատարողը բոլոր տեխսպասարկման կենտրոններում պարտավոր է ունենալ շարժական ավտոտեխսպասարկում՝ համապատասխան սարքերով ու գերծիքներով հագեցված հատուկ ավտոտրանսպերտային միջոց:
- Կատարողը պարտավոր է ունենալ առնվազն բարձր և ցածր ճնշման խողովակների վերանորոգման մեկ ստենդ, հատուկ տեխնիկայի համար նախատեսված անվաբացքի կարգավորման մեկ ստենդ, տվյալ չափաբաժնում նշված ավտոմեքենաների ախտորոշման սարքավորում և դիզելային վառելիքով աշխատող շարժիչների վառելանյութի ծախսի կարգաբերման սարքավորում (ТНВД стенд):

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ ... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց (հիմնավորում) առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝

տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Անդրադառնալով Բողոքաբերի այն պնդմանը, որ նախկին տարիներին հայտարարված նույն ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված մրցույթներում չի եղել նման պահանջներ, Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով 11.12.2020թ.-ին հայտարարված թիվ «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/9» և 13.01.2021թ.-ին հայտարարված թիվ «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/16» ծածկագրերով մրցույթները, արձանագրում է, որ այդ ընթացակարգերին մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Ռաֆֆի Սաղդասարյան Թորոսի» Ա/Ձ-ն:

Բողոքներ քննող անձը, ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը, հարկ է համարում փաստել, որ կատարվելիք աշխատանքների գները նախատեսված են:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի հրավերի 7.2-րդ կետի բողոքով բերված Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետին հակասելու հանգամանքներին, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ նախ նույն Հրավերով սահմանվել է, որ հայտի ապահովումը չի գործում, և երկրորդ՝ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարված «ԳՀԾՁԲ-ԱԻՆ-22/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիրն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արայիկ Մնացականի Մեսրոպյան» Ա/Ձ-ի կողմից 16.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/115 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**